Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Փետրվարի 5-ին, հինգշաբթի օրը, Մայր Աթոռում, ինչպես միշտ, այս անգամ ևս առանձին հանդիսավորությամբ նշվում է տոնը «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Փետրվարի 4-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կատարվում է Վարդանանց Նախատոնակը: «Նորահրաշ պսակաւոր» շարականի տպավորիչ երգեցողությամբ մի անգամ ևս բոլորի սրտերում պայծառանում են հայրենիքի և հավատքի անվեհեր մարտիկների անունները:

Փետրվարի 5-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամերգությունը պաշտվում է Մայր տաճարում:

Ժամը 11.30-ին սկսվում է ս. պատարագը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և հավատացյալների հոծ բազմություն:

Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը, կատարում է պատարագի կոմիտասյան երգեցողությունը:

Ժամը 12-ին թափորով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

Օրվա պատարագիչն է տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

«Հայր մեր»-ից առաջ կատարվում է հոգեհանգիստ, «վասն հանօրէն ննջեցելոց»:

Հավարտ ս. պատարագի Իջման ս. ընդունի առաջ կատարվում է հայրապետական մաղթանք, որովհետև նույն օրը նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնն է:

Քարոզում է Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և ոգեկոչում ս. Վարդանանց խնկելի հիշատակը՝ շնորհավորելով նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչությունը, արտահայտելով բարեմաղթություններ անելով Նրա կյանքի արևշատության, Մայր Աթոռի պայծառության և անսասանության համար:

Նույն օրը, ժամը 13.30-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում, Վարդանանց տոնի հիշատակին, կազմակերպվում է գրական-գեղարվեստական հանդես, որին նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի կվագով: Ապա ներածական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

Գ լսարանի ուսանող Ղազարոս սրկ. Կյուրեղյանը արտասանում է Եղիշեի «Տիկնայք փափկասունք» հատվածը, Գ դասարանի ուսանող Վրեժ Նահարյանը՝ Վ. Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը, Ա լսարանի ուսանող Հակոբ Խաչատրյանը՝ հատված Ն. Զարյանի «Զայն հայրենական» պոեմից: Սարկավագների խումբը ոգևորությամբ երգում է «Արիացեալք» մանկունք շարականը, Արարատ սրկ. Գալստյանը՝ Մ. Եկմալյանի «Լռեց. ամպերը եկան ծածկեցին» երգը:

Օրվա հանդեսի գլխավոր բանախոսն է հոգևոր ճեմարանի դասախոս Ս. Հովիվյանը, որը և վեր է հանում օրվա խորհրդի ազգային, կրոնական և պատմական նշանակությունը:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի պատգամով և խմբովին երգված «Հայր մեր»-ով: